

## ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

### Մասնագիտական կրթության որակի ապահովման բաժնի (2016-17 ուստարի)

Որակյալ ուսումնառության ապահովման ռազմավարական խնդրի իրականացման գրավականը մասնաճյուղում դեռևս 2009թ.-ից կայուն ներդրված **որակի ներքին ապահովման համակարգն է**: ԵՊՀ ԻՄ-ի որակի ներքին ապահովման կազմակերպական կառուցվածքին համապատասխան՝ այդ գործընթացները կանոնակարգվում և իրականացվում են Մասնագիտական կրթության որակի ապահովման (ՄԿՈԱ) բաժնի կողմից՝ Որակի կառավարման հանձնաժողովի մշտական աջակցությամբ և խորհրդատվությամբ:

Նախորդ ուստարում բաժինը կարելի է ասել ամբողջությամբ իրականացրել էր իր առջև դրված խնդիրները, ինչի մասին ուստարվա վերջում հաշվետվությամբ ներկայացվել է, և բաժնի գործունեությունը գնահատվել բավարար:

Բաժինն ընթացիկ ուստարում առաջնորդվում է կրթության որակի բնագավառում մասնաճյուղի ընտրած քաղաքականությամբ և բաժնի՝ 2016-17 ուստարվա աշխատանքային պլանով, որը կազմվել է համաձայն մասնաճյուղի զարգացման 2016-20 ռազմավարական ծրագրի պլան-ժամանակացույցից բխող կարճաժամկետ պլանի:

ՄԿՈԱ բաժինն իր գործունեությունը ներկայացրել է հիմնական և կիսամյակային աշխատանքային պլաններում:

Բաժնի աշխատանքային պլանը ներառում է առաջիկա մեկ տարում բաժնի կողմից իրականացվելիք գործողություններն ըստ ռազմավարական ծրագրի համապատասխան նպատակների, այն նաև իր մեջ ներառում է գործընթացներ, որոնք բաժինն իրականացնում է մշտապես, դրանք են մասնաճյուղի գործունեության արդյունավետության գնահատման ցուցանիշների համալրումը և վերլուծությունը, “Դասընթացների փաթեթներ”-ի կազմման վերաբերյալ խորհրդատվության պարբերաբար իրականացումը, արտաքին և ներքին շահակիցների կրթական կարիքների ուսումնասիրության իրականացումը, Որակի ներքին գործընթացների վերաբերյալ տեղեկատվության հավաքման ավտոմատ համակարգերի աշխատանքի խորհրդատվության ապահովումը, մասնաճյուղի պաշտոնական կայքի միջոցով տեղեկատվության տարածման և թափանցիկության ապահովումը և այլն: Այն ներառում է նաև նախորդ ուստարվա պլանով նախատեսված և թերի մնացած աշխատանքները՝ առաջին երկու ամսվա ընթացքում իրականացնելու համար:

Աշխատանքային պլանի հաստատումից հետո բաժնի աշխատակիցները ստացել են աշխատանքային պլանով իրենց առաջադրված գործընթացների ցանկը, ըստ գործընթացների կազմել են իրենց անհատական պլանները, յուրաքանչյուր հերթական նիստում նրանք ներկայացրել են իրենց կողմից իրականացրած աշխատանքները:

Որակի ներքին ապահովման գործընթացների շրջանակներում բաժինը մշտապես իրականացնում է որակի շարունակական բարելավմանը միտված փաստաթղթերի համալրում, վերանայում և ներդնում, խորհրդատվական մեծածավալ աշխատանքներ, անց է կացնում հարցումներ, կատարում համալիր վերլուծություններ, կազմում առաջարկությունների փաթեթներ:

Պլանով նախատեսված աշխատանքների հիմնական մասը բաժինն ամբողջությամբ ավարտին է հասցրել, կան պարբերաբար իրականացվող գործընթացներ, որոնք նույնպես եղել են ուշադրության կենտրոնում և իրականացվել են պատշաճ մակարդակով, բաժնի ամբողջ գործունեությունն ամրագրվել է արձանագրություններում:

2016-17 ուստարում բաժինն իրականացրել է հետևյալ աշխատանքները.

1. Համաձայն մասնաճյուղի 2016-20թթ. զարգացման ռազմավարական ծրագրի և ներկայացված բաժնի տարեկան աշխատանքային պլանի համապատասխան կետի (Ա/Պ-1, ՌԾ 1.1.3) բաժինն իր խորհրդատվություններով ամբողջ ուստարվա ընթացքում ազակցել է կրթական ծրագրերի ղեկավարներին կրթական ծրագրերը որակավորումների ազգային շրջանակին և միջազգային առարկայական հենանիշերին համապատասխան վերանայելու գործընթացում: Տնօրենի խորհրդական պարոն Ա.Մակարյանի առաջարկով, անմիջական ղեկավարությամբ և խորհրդատվությամբ բաժինը կազմակերպել է հանդիպում-դասընթացներ կրթական ծրագրերի ղեկավարների, ֆակուլտետների ղեկանների հետ, հետևյալ թեմաներով՝ Կրթական ծրագրի պատասխանատուի գործառույթները, ՀՀ Որակավորումների ազգային շրջանակ, Բենչմարքինգ, ինչպես կատարել համեմատական վերլուծություն, ինչպես ձևակերպել կրթական ծրագրի վերջնարդյունքները: Նրանց հետ քննարկվել են նաև կրթական ծրագրերի կառուցվածքային և բովանդակային վերափոխմանը վերաբերող հարցեր: Նրանց մշտապես ապահովել է համապատասխան մեթոդական նյութերով:

2. Աշխատել է «Առաջավոր փորձի փոխանցման և երիտասարդ դասախոսների աջակցման» կենտրոնի հետ, համատեղ կազմել են հանդիպումների հստակ գրաֆիկ՝ դասընթացների թեմաներով, յուրաքանչյուր դասընթացի համար նախապատրաստել համապատասխան մեթոդական նյութերը և տրամադրել պատասխանատուներին: Կենտրոնի աշխատանքներին աջակցման շրջանակներում կազմակերպել է 7 դաս-քննարկումներ, որոնց մասնակցել են մասնաճյուղի երիտասարդ դասախոսները, կրթական ծրագրերի պատասխանատուները և նաև ուսանողներ:

3. 2016թ.-ի սեպտեմբերին և 2017թ.-ի հունիսին իրականացրել է համապատասխանաբար 2015-16 և 2016-17 ուստարիների շրջանավարտների ամփոփիչ ատեստավորման քննությունների և ավարտական աշխատանքների վերաբերյալ հանձնաժողովների կարծիքների ուսումնասիրություն և դրանց ամփոփում: Ըստ ժամանակացույցի բաժնի կողմից հանձնաժողովներին տրվել է հաշվետվության հատուկ ձևաթերթ, որում ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովին առաջարկվել է գնահատել և վերլուծել շրջանավարտների ձեռք բերած ուսումնառության ընդհանրական արդյունքները, բնութագրել ավարտական աշխատանքների թեմաները, գնահատել և վերլուծել դրանց արդիականությունը և համապատասխանությունը որակավորմանը և շրջանավարտների կողմից աշխատանքների ներկայացման հմտությունը: Ուսումնասիրել են բոլոր հանձնաժողովների կարծիքները և առաջարկները, բոլոր մասնագիտությունների համար կատարել է վերլուծություն, ապա ամփոփել մասնաճյուղի կտրվածքով: Առանձնացվել են կոնկրետ ոլորտում մասնաճյուղում իրականացվող գործունեության արդյունավետությունը բարձրացնելուն ուղղված առաջարկները, որոնք վերաբերել են հարցաշարերի և ավարտական աշխատանքների թեմատիկայի արդիականացմանը, տարածաշրջանային հիմնախնդիրներին անդրադարձին, լաբորատոր բազայի կատարելագործմանն ու պրակտիկաների ավելի արդյունավետ ու նպատակաուղղված անցկացմանը: Կազմվել են երկու հաշվետվություններ՝ առանձին մասնագիտությունների համար և ընդհանրացված՝ մասնաճյուղի համար: Հաշվետվությունները տեղադրվել են կայքում, իսկ առանձին մասնագիտությունների համար կատարված վերլուծություններն ուղարկվել համապատասխան ամբիոններ:

4. Ազակցել է Ուսանողական խորհրդին (ՈԻԽ-ին) ուսանողի ցուցաբերած հասարակական ակտիվության գնահատման մեխանիզմների մշակման գործում (2016թ. սեպտեմբեր): Ստորաբաժանումներին և տարբեր կառույցներին խորհրդակցությամբ աջակցման շրջանակներում բաժինն իրականացրել է ըստ կատարած աշխատանքների ուսանողի

ցուցաբերած հասարակական ակտիվության գնահատման ցուցիչների մշակում: Ցուցիչները մշակվել են հիմք ունենալով մասնաճյուղի 2016-20թթ. զարգացման ռազմավարական ծրագրի խնդիրները և խմբավորվել են ըստ գործունեության ուղղությունների. մասնկցություն մասնաճյուղի կառավարման և ՌԻՄ կառավարման գործընթացներին, փաստաթղթերի մշակման և խմբագրման աշխատանքներին, կազմակերպչական աշխատանքների, կոնկրետ գործընթացների, աշխատանք ուսանողության հետ, ուսանողների գործունեության լուսաբանման ապահովում, կարիքների վերհանում և աջակցում դրանց լուծմանը, միջոցառումների ծրագրերի մշակում, այլ ձեռքբերումներ և այլն: Ցուցիչները տրվել են ՌԻՄ-ին՝ իրենց կողմից վերամշակման և վերջնական սանդղակի որոշման համար, ինչը հիմք է ծառայելու ակտիվ ուսանողների խրախուսման համար:

5. **Կատարել է** ԵՊՀ ԻՄ շրջանավարտների վերաբերյալ արտաքին շահակիցների կարծիքի ուսումնասիրության հարցման արդյունքների վերլուծություն: Հարցումը բաժնի կողմից կազմակերպվել է 2016 թվականի հունիս-սեպտեմբեր ամիսներին, որին մասնակցել են 44 արտաքին շահակիցներ և պատասխանել են համապատասխան հարցաշարի հարցերին: Ընդորում, հարցման 24 մասնակիցներ հարցաթերթին պատասխանել են առցանց, գնահատել են մասնաճյուղի շրջանավարտների տեսա-գործնական գիտելիքներն ու հմտությունները, կազմակերպչական, ստեղծագործական ու հաղորդակցման կարողությունները, անձնային-բարոյական որակները, ինքնակատարելագործման մշակույթը և այլն: Բաժինը կազմել է հարցման արդյունքների վերաբերյալ հաշվետվություն, այն հրապարակայնացրել է, արդյունքներն ուղարկել է համապատասխան ստորաբաժանումներին, տեղադրել է կայքում: **Ստաջարկ է ներկայացրել** Ուսումնա-մեթոդական վարչություն, կրթական ծրագրերի պատասխանատուների հետ ծրագրերում **«Գործարար հաղորդակցություն»** առարկայի, կամ որպես հումանիտար առարկաների առարկայական ծրագրի բաղադրատարր, կամ հիմնականում նրանց որոշ դասաժամերի հաշվին առանձին առարկայի տեսքով ներմուծման հնարավորությունը քննարկելու վերաբերյալ, այնպես, որ տվյալ ներմուծումը պարունակի այն գիտելիքների ու հմտությունների մատուցումը, որոնք զարգացնելու են շուկայական-մրցակցային կյանքի պահանջներին համապատասխան որակները:

6. 2011-16թթ. կատարած տարբեր ուսումնասիրությունների արդյունքների հիման վրա **ամփոփել է** արտաքին շահակիցների կարծիքները մասնաճյուղի ուսանողների, շրջանավարտների, պրակտիկանտ-ուսանողների և ընդհանրապես մասնաճյուղում ուսումնառության որակի վերաբերյալ, **ուսումնասիրել և նույնպես ամփոփել է** ներքին շահակիցների կարծիքները մասնաճյուղի, ուսանողների գնահատման, ուսումնառությունից բավարարվածության, պրակտիկաների կազմակերպման վերաբերյալ, ըստ 2011-16 տարիների ընթացքում 3 անգամ իրականացրած մասնաճյուղի ինստիտուցիոնալ կարողությունների վերլուծության և ԵՊՀ ԻՄ զարգացման 2011-15թթ. ռազմավարական ծրագրի իրականացման վերլուծության արդյունքների 2017թ. փետրվար ամսին կազմել է հավաքագրված խնդիրների ամփոփ փաթեթն ըստ ոլորտների, ներքին և արտաքին շահակիցների կողմից կատարված առաջարկությունների ամփոփ փաթեթն ըստ գործընթացների: Փաթեթում խնդիրները հավաքագրվել են ըստ ոլորտների, նշվել են դրանց լուծման համար պատասխանատու ստորաբաժանումները և այլն: Ըստ ստորաբաժանումների կազմվել են նաև ենթափաթեթներ: Փաթեթները ներկայացվել են տնօրենությանը՝ քննարկման և ստորաբաժանումներին համապատասխան հանձնարարականով ուղարկելու նպատակով:

7. 2016 թվականի նոյեմբեր-2017 թվականի հունվար ամիսներին **կազմակերպել և իրականացրել է** աշխատանքներ կրթական ծրագրերի 11 ուսանողական խմբերի (հիմնականում

4-րդ կուրսի ուսանողներ) հետ՝ Խմբային բանավեճի կամ, այսպես կոչված «Ֆոկուս-խմբի» մեթոդով, որի նպատակն է ազատ և անկաշկանդ մթնոլորտում քննարկել ուսանողներին հուզող տարբեր հիմնահարցեր, հետամուտ լինել ուսանողական հարցումների արդյունքներին, ապահովել կրթական ծրագրերի որակի վերաբերյալ հետադարձ կապը, այդ խմբերի անդամներին ծանոթացնել կրթության որակի վերաբերյալ ուսումնասիրություններ կատարելու տեխնիկային, նրանց մոտ ձևավորել վերլուծություններ կատարելու հմտություններ: Հանդիպումների 2-3 ժամվա ընթացքում բաժնի մասնագետ Է.Կյուրեղյանը անց է կացրել գրույց-քննարկում, որոնց արդյունքները նա գրանցել է, ապա կատարել դրանց վերլուծություն, դուրս գրելով ուսանողների առաջ քաշած խնդիրները, առաջարկները, ապա ամփոփ ներկայացրել է կրթական գործընթացի բարելավմանն ուղղված առաջարկներ: Այդ առաջարկները ներկայացվել են համապատասխան ստորաբաժանումներին՝ ֆակուլտետների ղեկաններին, ամբիոնների վարիչներին, կրթական ծրագրերի պատասխանատուներին, Ուսումնամեթոդական վարչություն, շրջանավարտների և կարիերայի կենտրոն, Ուսանողական խորհուրդ:

Անցկացրած քննարկումների արդյունքների վերլուծությունը հաշվետվության տեսքով տեղադրվել է կայքում:

Ֆոկուս-խմբերի հետ հանդիպումների և նրանցից ձեռք բերված արդյունքների վերաբերյալ պարոն Կյուրեղյանը հարցազրույց է տվել մասնաճյուղի հասարակայնության հետ կապերի և մամուլի պատասխանատու Հ.Վանյանին, հարցազրույցը տեղադրվել է մասնաճյուղի կայքում:

2017 թվականի ապրիլին մանկավարժական պրակտիկայից ավարտից հետո պրակտիկայի արդյունավետության վերաբերյալ բաժնի մասնագետ Է.Կյուրեղյանը հանդիպումներ է ունեցել ֆոկուս-խմբերի հետ (ավարտական կուրսերի ուսանողների հետ), անց է կացրել լրացուցիչ քննարկումներ, որոնց ընթացքում ձեռք են բերվել ուշադրության արժանի արդյունքներ: Հանդիպում քննարկումների ժամանակ մասնակից ուսանողներն բարձրաձայնել են պրակտիկայի կազմակերպման, տևողության, ժամանակի, իրենց վստահելու հետ կապված խնդիրներ: Այդ առաջարկները հավաքագրվել են, կազմվել է փաթեթ, որը ներկայացվել է համապատասխան ամբիոններ և ուսումնամեթոդական վարչություն:

8. Կատարել է 2016 թվականի մայիս-հունիս ամիսներին բաժնի կողմից անցկացրած ԵՊՀ ԻՄ-ում գիտության վիճակի վերաբերյալ հարցման արդյունքների վերլուծություն: Հարցաշարում ընդգրկվել են հարցեր, որոնք բացահայտում են դասախոսների վերաբերմունքը գիտական գործունեության հանդեպ, այդ գործունեությանը օժանդակող կամ խոչընդոտող գործոնները, դասավանդման գործընթացում նրա արդյունքների ներառվածության փաստերը, տարածաշրջանային խնդիրների հետ գիտական հետաքրքրությունների կապվածությունը, դրանցում դասախոսների մասնակցության պատրաստակամությունը: Հարցմանը մասնակցել են մասնաճյուղի 83 դասախոսներ:

Հարցման արդյունքների վերլուծության հիման վրա կազմվել է հաշվետվություն, հարցման արդյունքների մասին իրազեկել է պրոֆեսորա-դասախոսական անձնակազմին:

9. Իրականացրել է մասնաճյուղի 2016-20թթ. զարգացման ռազմավարական ծրագրի 2016թ.-ի բաժնի կատարողականի և ամբողջ մասնաճյուղի կատարողականի վերլուծություն: 2016թ. դեկտեմբերին բաժինը հավաքագրել է մասնաճյուղի բոլոր ստորաբաժանումների հաշվետվությունները՝ 2015-16 ուստարում նրանց գործունեության և 2016-20թթ. զարգացման ռազմավարական ծրագրի 2016թ.-ի կատարողականի վերաբերյալ, կազմել է 2015-16 ուստարում մասնաճյուղի գործունեության ամփոփ հաշվետվությունը՝ **2016թ. դեկտեմբերի 20-ին** ԵՊՀ-ի Գիտխորհրդի տարեվերջյան ամփոփիչ նիստում ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի տնօրեն Ս. Ա.

Առաքելյանի տարեվերջյան հաշվետվության հիման վրա: Հաշվետվությունը տեղադրվել է կայքում: Բաժինը կազմակերպել է հաշվետվության տպագրումը:

10. 2017թ.-ի հունվար ամսին մասնաճյուղի պաշտոնական կայքի «կրթության որակի կառավարում» բաժնում տեղադրել է մասնաճյուղի ինստիտուցիոնալ կարողությունների ինքնագնահատման զեկույցը: Ձեկույցը տեղադրված է ըստ չափանիշների՝ առանձին հասանելիությամբ, որը հեշտացնում է զեկույցի նտարբեր մասերի հետ աշխատանքը, այն դարձնում ավելի պահանջված: Ձեկույցը կազմվել է բաժնի աշխատակիցների ղեկավարմամբ ըստ չափանիշների կազմված աշխատանքային խմբերի կողմից, 2015թ.-ին (3-րդ անգամ): Իսկ 2017թ. հունիսին կազմակերպել է մասնաճյուղի ինստիտուցիոնալ կարողությունների ինքնագնահատման զեկույցի **տպագրումը**:

11. Վերանայել է իր կողմից անց կացվող հարցումների հարցաթերթերը՝ այդ հարցումները առցանց անցկացնելու համար, դրանք միավորվել և քչացվել են, կազմվել է հարցումների անցկացման ժամանակացույց:

12. Փետրվար հունիս ամիսների ընթացքում ըստ վերանայված հարցաշարերի իրականացրել է պլանով նախատեսված 5 հարցումներ. 1)պրակտիկանտ ուսանողների վերաբերյալ արտաքին շահակիցների կարծիքի, 2)շրջանավարտների վերաբերյալ արտաքին շահակիցների կարծիքի, 3,4)մասնաճյուղից ուսանողների և պրոֆեսորադասախոսական կազմի բավարարվածության ուսումնասիրման, և 5) մասնաճյուղում ստացած կրթությունից շրջանավարտների (առկա և հեռակա ուսուցման) բավարարվածության գնահատման հարցումներ: Վերջին 4 հարցումներն անց են կացվել անցանց (on-line): Առցանց հարցումների կազմման և իրականացման գործում բաժնին աջակցել են մասնաճյուղի գիտ.քարտուղար Մ.Աթոյանը և շրջանավարտների և կարիերայի կենտրոնի պատասխանատու Ա.Եզանյանը:

Պրակտիկանտ ուսանողների վերաբերյալ արտաքին շահակիցների կարծիքի ուսումնասիրման հարցումը բաժնին իրականացրել է փետրվար-մարտ ամիսներին, իսկ մարտին կատարել է այդ հարցման արդյունքների վերլուծություն, կազմել է հաշվետվություն: Հարցման արդյունքներն ուղարկվել են համապատասխան ֆակուլտետներ, ամբիոններ, նաև կրթական ծրագրերի պատասխանատուներին, ինչպես նաև ուսանողական խորհրդին, տեղադրվել են մասնաճյուղի էլ.կայք էջում: Մասնագիտական ամբիոնների պրակտիկանների ղեկավարների և համապատասխան արտաքին շահակիցների հետ կազմակերպվել է համատեղ քննարկումներ,:

Մասնաճյուղից բավարարվածության հարցումն իրականացվել է մասնաճյուղի 1-3 կուրսի բոլոր ուսանողների շրջանում, դրանք իրականացվել են համակարգչային սրահներում, ինչի համար բաժնում ուսումնասիրվել են մասնաճյուղի համակարգչային սրահների զբաղվածության և նրանցում հարցման անցկացման հնարավորությունները, կազմվել է ըստ կուրսերի հարցման իրականացման պլան-ժամանակացույց: Ըստ ժամանակացույցի հարցումներն իրականացվել են ապրիլի 25-ից մինչև մայիսի 20-ն ընկած ժամանակահատվածում:

Պրոֆեսորադասախոսական հարցման իրականացման համար գիտ.քարտուղարի աջակցությամբ հավաքագրվել են աշխատակիցների էլ.փոստերի հասցեները, նրանց ուղարկվել է առ-ցանց հարցման հղումը: Այս հարցումն իրականացվել է մայիս և հունիս ամիսների ընթացքում:

Մասնաճյուղի շրջանավարտների վերաբերյալ հարցումն իրականացվել է մասնաճյուղի շրջանավարտների և կարիերայի աշխատանքների համակարգող Արփինե Եզանյանի անմիջական աջակցությամբ: Նա մասնաճյուղի շուրջ վեց տասնյակ արտաքին շահակիցների էլ.փոստերին ուղարկել է առ-ցանց հարցման հղումը: Այս հարցումն իրականացվել է մայիս և հունիս ամիսների ընթացքում:

Մասնաճյուղից բավարարվածության ուսանողական և դասախոսական հարցման արդյունքները, շրջանավարտների վերաբերյալ արտաքին շահակիցների կարծիքները հավաքագրվել են, նրանց վերլուծությունը բաժինը կկատարի նոր ուսումնական տարվա սեպտեմբերին:

Առկա և հեռակա ուսուցման շրջանավարտների մասնաճյուղում ստացած կրթությունից բավարարվածության առ-ցանց հարցումները նույնպես իրականացվել են ըստ այդ հարցման կանոնակարգի մայիս հունիս ամիսներին, համակարգչային սրահներում յուրաքանչյուր մասնագիտության ամփոփիչ ատեստավորման ավարտից հետո:

Շրջանավարտների մասնաճյուղում ստացած կրթությունից բավարարվածության հարցման արդյունքները բաժինը վերլուծել է, կատարել է դրանց համեմատական վերլուծություն նախորդ 3 ուստարիների հարցումների արդյունքների հետ: Հարցման արդյունքների համար կազմվել է հաշվետվություն: Հարցումների արդյունքներն ուղարկվել են համապատասխան ֆակուլտետներ:

13. Հաշվետու ուստարվա սեպտեմբեր ամսին կազմակերպել է մասնաճյուղի գործունեության գնահատման համալրված և վերլուծված **2011-16թթ.** առանցքային ցուցիչների (ԳԱՑ 2011-16) հրապարակայնացումը և տպագրումը: Այս վերլուծության նպատակը ԵՊՀ ԻՄ-ի գործունեության արդյունավետության և կատարողականի գնահատումն է՝ գործունեության առանցքային ցուցանիշների սահմանված լրակազմի օգնությամբ: Հավաքագրել է մասնաճյուղի գործունեության գնահատման **2016-2017թթ.** առանցքային ցուցիչները 2012-17թթ. ԵՊՀ ԻՄ-ի գործունեության արդյունավետության և կատարողականի գնահատումը ցուցանիշների սահմանված լրակազմի օգնությամբ իրականացնելու համար: Վերանայվել են ցուցիչները, կատարվել են փոփոխություններ ցուցիչների կազմի մեջ: Տվյալները ներառված են համապատասխան ցուցիչների մեջ, կատարվում է վերլուծություն: Նախապատրաստվում է տպագրության:

14. 2016թ. դեկտեմբերին կատարել է «Դասավանդման որակի և արդյունավետության գնահատման» 2015-16 ուստարվա 2-րդ կիսամյակի ուսանողական հարցման արդյունքների վերլուծություն, կազմել է համապատասխան հաշվետվություն, որն ուղարկվել է բոլոր ֆակուլտետներին, արդյունքները տեղադրվել են կայքում:

15. «Տեսուսագիտության տեսություն» մասնագիտության **կրթական ծրագրի պատասխանատու, տ.գ.թ., ասիստենտ Գ.Ավետիսյանը** մասնակցել է Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոնի կողմից կազմակերպված կրթության որակի շաբաթին, որի նպատակն էր կրթության ոլորտի ներկայացուցիչների, ղեկավար օղակների և հասարակության ուշադրությունը հրավիրել կրթության որակի ապահովման վրա, քննարկելու առկա խնդիրները, կիսվելու լավագույն փորձով և ձևավորելու ապագայի ընդհանուր տեսլական: Աշխատաժողովներում քննարկվել են ուսանողների, երիտասարդ դասախոսների, մասնագիտության կրթական ծրագրերի և որակավորումների ազգային շրջանակի համապատասխանության խնդիրներ, իսկ երկօրյա համաժողովում քննարկվել են գնահատման համակարգերի բարելավմանը վերաբերող հարցեր: Մասնակիցն իր ձեռքբերումները ներկայացրել է բաժնում հետագայում դրանք բաժնի գործունեության մեջ օգտագործելու համար:

16. **Խմբագրման ընթացքի մեջ է** բաժնի աշխատակիցներ Է.Կյուրեղյանի և Մ.Ճաղարյանի «ԵՊՀ Իջևանի մասնաճյուղը հասարակական կարծիքի անդրադարձում» գիրքը, որը ներառում է գիտա-ուսումնական մտորումներ և փաստեր բաժնի 2012-2017թթ. իրականացրած հասարակական կարծիքի ուսումնասիրությունների, դրանց վերլուծությունների և ձեռքբերումների վերաբերյալ: Գիրքը տպագրման կներկայացվի ս.թ. սեպտեմբերին:

17. Մշտապես աջակցել է շրջանավարտների և կարիերայի աշխատանքները համակարգող Ա.Եզանյանին:

18. Մշտապես աշխատել է կայքէջի բովանդակության բարելավման ուղղությամբ՝ հասարակությանը ընթացակարգերի և գործընթացների թափանցիկությունն ու հասանելիությունը ապահովելու համար: Ապահովել է պաշտոնական կայքի մշտապես թարմացվող և եռալեզու տարբերակի առկայությունը:

19. Մշտապես ապահովել է որակի ներքին գործընթացների վերաբերյալ տեղեկատվության հավաքման ավտոմատ համակարգերի (ֆակուլտետների դեկանատներում, անձնակազմի կառավարման բաժնում, ուսումնամեթոդական վարչությունում) անխափան աշխատանքը:

***Մասնագիտական կրթության որակի ապահովման բաժին***